Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի 22 -ի N 1802 -Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ ԱԶՈՏԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

1. Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության մարզերի հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման հարցում, նպաստել գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների և գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը:

2. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը պայմանագրային հիմունքներով 1 մլրդ դրամ է հատկացնում մատակարարին՝ 25000 տոննա ազոտական պարարտանյութ <<Ամոնիակային սելիտրա>> (34,4% ազոտի պարունակությամբ) ձեռք բերելու և մինչև 2012 թվականի ապրիլի 10-ը Հայաստանի Հանրապետության մարզերի հողօգտագործողներին ծրագրում ամրագրված գնով վաճառելու համար:

3. Հայաստանի Հանրապետության մարզերում պարարտանյութի վաճառքն իրականացնելու համար հիմք ընդունել մարզերում վերջին 3 տարիներին կատարված փաստացի ցանքերի և մշակվող բազմամյա տնկարկների տարածությունների միջին ցուցանիշը (ըստ Հայաստանի Հանրապետության ԱՎԾ-ի տվյալների)՝ համաձայն աղյուսակի:

3.1. Աղյուսակով հաստատված պարարտանյութը Հայաստանի Հանրապետության մարզերում ամբողջությամբ չվաճառվելու դեպքում մարզպետը 5-օրյա ժամկետում տեղեկա-

տվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն չիրացված պարարտանյութի խմբաքանակի վերաբերյալ:

3.2. Չիրացված պարարտանյութի խմբաքանակի՝ ըստ մարզերի վերաբաշխման իրավասությունը վերապահվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը:

4. Հայաստանի Հանրապետության համայնքներում պարարտանյութի վաճառքն իրականացնել համաձայն մարզպետների կողմից հաստատված ցանկերի՝ հիմք ընդունելով համայնքներում վերջին 3 տարիներին կատարված փաստացի ցանքերի և մշակվող բազմամյա տնկարկների տարածությունների միջին ցուցանիշը:

4.1. Հողօգտագործողներին վաճառվող պարարտանյութի առավելագույն քանակը սահմանել 500 կգ.

4.2. Հայաստանի Հանրապետության մարզպետներն իրենց կողմից հաստատված ցանկերը մատակարարին տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն են ներկայացնում մինչև 2012 թվականի հունվարի 10-ը:

4.3. Մարզպետների կողմից հաստատված ցանկով պարարտանյութը համայնքներում ամբողջությամբ չվաճառվելու դեպքում 5-օրյա ժամկետում մարզպետի կողմից հաստատվում է չիրացված խմբաքանակի վերաբաշխման նոր ցանկ և ներկայացվում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն՝ մատակարարին ներկայացնելու համար:

5. Մատակարարը պարտավոր է՝

5.1. Հայաստանի Հանրապետություն ներմուծել 25000 տոննա ազոտական պարարտանյութ <<Ամոնիակային սելիտրա>> 34,4% ազոտի պարունակությամբ (այսուհետ՝ պարարտանյութ).

5.2. Պարարտանյութի վաճառքն իրականացնել 1 կիլոգրամը 120 դրամ արժեքով (50 կգ քաշով 1 պարկը 6000 դրամ).

5.3. Պարարտանյութը համայնքներում վաճառել համաձայն մարզպետների կողմից հաստատված ցանկերի.

5.4. Մարզպետների կողմից հաստատված ցանկով պարարտանյութը համայնքներում ամբողջությամբ չվաճառվելու դեպքում 5-օրյա ժամկետում տեղեկացնել համապատասխան մարզպետարան չիրացված խմբաքանակի վերաբաշխման նոր ցանկ հաստատելու համար:

5.5. Պարարտանյութի վաճառքն իրականացնելիս լրացնել, վավերացնել և համայնք-ների ղեկավարների կողմից վավերացնելուց հետո Հայաստանի Հանրապետության համա-պատասխան մարզպետարաններ ներկայացնել տեղեկատվություն պարարտանյութ ձեռք բերած տնտեսավարողների մասին՝ համաձայն N 1 ձևի:

5.6. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնելու համար Հայաստանի Հանրապետության մարզերում 25000 տոննա պարարտանյութի վաճառքը մինչև 2012 թվականի ապրիլի 10-ն ավարտելուց հետո տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել՝

5.5.1 տեղեկատվություն՝ համաձայն N 2 ձևի՝ Հայաստանի Հանրապետության մարզպետների և մատակարարի կողմից հաստատված, համայնքների ղեկավարների կողմից ստորագրված,

5.5.2. հաշվետվություն ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև N 1

Հաստատում եմ
համայնքի ղեկավար

ՀՀ ……..... մարզի ……..…….. համայնքում
ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով
պետական աջակցության ծրագրի շրջանակներում պարարտանյութ գնած շահառուների ցանկ

……..

NN ը/կ	Անունը, ազգանունը, հայրանունը	Անձնագրի տվյալները	Գնված պարարտանյութի քանակը	Ստորագրությունը

Ընդամենը			

Մատակարար կազմակերպության անվանումը ……..……..
(ստորագրությունը)

Ձև N 2
Հաստատում եմ
մարզպետ
……..……

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրի շրջանակներում ՀՀ……..... մարզի համայնքներին նախատեսված, փաստացի վաճառված ազոտական պարարտանյութի քանակության և շահառուների մասին 2012թ. ……..……-ի դրությամբ

NN ը/կ	Համայնքը	Համայնքի ղեկավարի անունը, ազգանունը	Համայնքին նախատեսված քանակությունը	Համայնքում փաստացի վաճառված քանակությունը	Պարարտանյութ գնած շահառուների թիվը	Համայնքի ղեկավարի ստորագրությունը
Ընդամենը						

Մատակարար կազմակերպության անվանումը …….
(ստորագրությունը)

11_1802.doc

Աղյուսակ

Հայաստանի Հանրապետությունում ընդամենը ցանքային ու բազմամյա տնկարկների տարածությունները 2009-2011 թվականներին և գործակցով հաշվարկված մարզերին տրվող պարարտանյութի քանակությունը

հեկտար

NN ը/կ	Մարզը	2009				2010				2011				Երեք տարվա միջին ցանքեր և բազմամյա տնկարկներ	Գործակցով հաշվարկված մարզերին տրվող պարարտա-նյութի քանակու-թյունը /տոննա/
		Ընդամենը ցանքային տարա-ծությունը	Բազմամյա տնկարկներ		**Ընդա-մենը**	Ընդամենը ցանքային տարածու-թյունը	Բազմամյա տնկարկներ		**Ընդա-մենը**	Ընդամենը ցանքային տարածու-թյունը	Բազմամյա տնկարկներ		**Ընդա-մենը**		
			պտղատու այգիներ	խաղողի այգիներ			պտղատու այգիներ	խաղողի այգիներ			պտղա-տու այգիներ	խաղողի այգիներ			
1.	Արա-գածոտն	32158	5176	1566	**38900**	32167	5212	1571	**38950**	32420	5212	1571	**39203**	39018	2856
2.	Արարատ	20048	7096	4978	**32122**	20328	7112	4992	**32432**	21109	7112	4992	**33213**	32589	2385
3.	Արմավիր	30920	7622	6490	**45032**	27518	8207	7379	**43104**	28011	8207	7379	**43597**	43911	3214
4.	Գեղար-քունիք	71779	1426	0	**73205**	70198	1426	0	**71624**	72264	1426	0	**73690**	72840	5332
5.	Լոռի	25472	2420	64	**27956**	23331	2433	64	**25828**	22339	2433	64	**24836**	26207	1918
6.	Կոտայք	16478	4351	349	**21178**	12827	4476	362	**17665**	13504	4476	362	**18342**	19062	1395
7.	Շիրակ	54097	450	0	**54547**	51570	456	0	**52026**	51890	456	0	**52346**	52973	3878
8.	Սյունիք	29830	2588	184	**32602**	26326	2587	185	**29098**	24761	2587	185	**27533**	29744	2177
9.	Վայոց ձոր	4646	2154	925	**7725**	4477	2124	895	**7496**	4499	2124	895	**7518**	7580	555
10.	Տավուշ	13452	2348	1312	**17112**	14147	2350	1313	**17810**	14250	2350	1313	**17913**	17612	1289
Ընդամենը		**298880**	**35631**	**15868**	**350379**	**282889**	**36383**	**16761**	**336033**	**3E+05**	**36383**	**16761**	**338191**	341534	25000

Գործակիցը հաշվարկված է 25000 / 341534 = 0073199154

Գործակից 0.073199154

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի 22 -ի N 1802 -Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

Բաժինը	Խումբը	Դասը	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, տնտեսագիտական դասակարգման հոդվածների, ֆինանսավորվող ծրագրերի և դրանք իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ծախսերի ավելացումները նշված են դրական նշանով, իսկ ծախսերի նվազեցումները՝ փակագծերում) տարի
1	2	3	4	5
			ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	**-**
01			**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**(1,000,000.0)**
			այդ թվում՝	
	07		**Պետական պարտքի գծով գործառնություններ**	**(1,000,000.0)**
			այդ թվում՝	
		01	**Պետական պարտքի գծով գործառնություններ**	**(1,000,000.0)**
			01. ՀՀ պետական արժեթղթերի (գանձապետական պարտատոմսերի) սպասարկում (տոկոսավճար)	**(1,000,000.0)**
			ՀՀ ֆինանսների նախարարություն	(1,000,000.0)
			այդ թվում՝	
			Ներքին տոկոսավճարներ	(1,000,000.0)
11			**ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ**	**1,000,000.0**
			այդ թվում՝	

1	2	3	4	5
	01		**ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ**	**1,000,000.0**
			այդ թվում՝	
		01	**ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ**	**1,000,000.0**
			01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	**1,000,000.0**
			ՀՀ կառավարություն	1,000,000.0
			այդ թվում՝	
			Պահուստային միջոցներ	1,000,000.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ